



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

21 փետրվարի 2017 թվականի N 4 - Ա

ԳԱՐԻԿ ՄԱՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ  
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2017 թվականի փետրվարի 20-ի թիվ զեկուցագիրը և հաշվի առնելով Գարիկ Մամյանի բացատրությունը՝

կարգադրում եմ.

1. Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար «ՀՀ Տավուշի մարզի Ոսկևանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Գարիկ Մամյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:
2. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:



Հ. ԱՐՈՎՅԱՆ